

**«Թեյ-Սեյ» ՓԲԸ**

2015թ.

**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Երևան-2016

Բովանդակություն

*Անկախ աուդիտորական եզրակացություն* ..... 3

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ..... 5

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ..... 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ..... 7

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ..... 8

2015թ. ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ  
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 9



## **Անկախ աուդիտորական եզրակացություն**

«Թել-Սել» ՓԲԸ բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թել-Սել» ՓԲԸ-ի և իր դուստր ընկերությունների (այսուհետ՝ Խումբ) 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2015թ. ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

### **Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

### **Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք աուդիտորի վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից և ներառում է նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե՛ խարդախությամբ, և թե՛ սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը՝ որքանով այն տեղին է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Խմբի ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:



Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:


**Կարծիք**

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի և իր դուստր ընկերությունների առ 31 դեկտեմբերի 2015թ. ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Արթուր Հարությունյան  
Տնօրեն



Անուշ Գրիգորյան  
Աուդիտի մենեջեր



«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ  
Երևան  
30 հունիսի 2016 թ.





**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**

Հազար դրամ

	Ծան.	31.12.2015թ.	31.12.2014թ. (վերաներկայացված)
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	6	300,158	282,732
Ոչ նյութական ակտիվներ	7	63,115	39,755
Գուդվիլ	8	1,157,700	1,157,700
Հետաձգված հարկային ակտիվներ		12,900	2,485
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		8,799	6,900
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,542,672</b>	<b>1,489,572</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ		45,581	20,494
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	9	627,571	310,741
Շահութահարկի գծով կանխավճար		30,011	5,281
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ		6,800	8,450
Դրամական միջոցներ	10	1,431,091	1,042,428
Այլ ընթացիկ ակտիվներ		143	51
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>2,141,197</b>	<b>1,387,445</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>3,683,869</b>	<b>2,877,017</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
Կանոնադրական կապիտալ	11	150,000	30,000
Պահուստային կապիտալ	12	35,000	25,000
Կուտակված շահույթ		440,629	782,658
<b>Ընդամենը մայր ընկերության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ</b>		<b>625,629</b>	<b>837,658</b>
<b>Զվերահսկվող բաժնեմաս</b>		<b>28,012</b>	<b>32,331</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>653,641</b>	<b>869,989</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	13	590,595	71,114
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>590,595</b>	<b>71,114</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	13	490,042	343,121
Շահութահարկի գծով պարտավորություն		-	76,831
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	14	1,936,672	1,503,537
Ընթացիկ պահուստներ		12,919	12,425
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2,439,633</b>	<b>1,935,914</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>3,683,869</b>	<b>2,877,017</b>

Գլխավոր տնօրեն

Արամ Ազատյան

30 հունիսի 2016 թ.

Գլխավոր հաշվապահ


Արթուր Թորոսյան




Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող 9-ից 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**

Հազար դրամ	Ծան.	2015թ.	2014թ.
Հասույթ	15	2,260,280	2,025,938
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	16	(1,222,773)	(851,120)
<b>Համախառն շահույթ</b>		<b>1,037,507</b>	<b>1,174,818</b>
Իրացման ծախսեր	17	(118,795)	(69,101)
Վարչական ծախսեր	18	(301,419)	(210,853)
Այլ եկամուտներ	19	238,442	187,449
Այլ ծախսեր	20	(67,288)	(24,037)
Տոկոսային եկամուտներ		2,274	5,054
Ֆինանսական ծախսեր	13	(146,582)	(84,801)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		(35,145)	14,205
<b>Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>608,994</b>	<b>992,734</b>
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	21	(129,342)	(214,812)
<b>Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք, որը վերագրելի է՝</b>		<b>479,652</b>	<b>777,922</b>
<b>Մայր կազմակերպության բաժնեդերերին</b>		<b>483,971</b>	<b>779,469</b>
<b>Չվերահսկվող բաժնեմասին</b>		<b>(4,319)</b>	<b>(1,547)</b>

  
 Գլխավոր տնօրեն  
 Արամ Ագաոյան



  
 Գլխավոր հաշվապահ  
 Արթուր Թորոսյան

30 հունիսի 2016 թ.


Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:




Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Մայր կազմակերպության բաժնետերերին սեփական կապիտալ	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2014թ.</b>	<b>30,000</b>	<b>25,000</b>	<b>870,489</b>	<b>925,489</b>	<b>33,878</b>	<b>959,367</b>
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	779,469	779,469	(1,547)	777,922
Հատկացում պահուստային կապիտալին	-	-	-	-	-	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(867,300)	(867,300)	-	(867,300)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2014թ.</b>	<b>30,000</b>	<b>25,000</b>	<b>782,658</b>	<b>837,658</b>	<b>32,331</b>	<b>869,989</b>

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Մայր կազմակերպության բաժնետերերին սեփական կապիտալ	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2015թ.</b>	<b>30,000</b>	<b>25,000</b>	<b>782,658</b>	<b>837,658</b>	<b>32,331</b>	<b>869,989</b>
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	483,971	483,971	(4,319)	479,652
Կանոնադրական կապիտալի ավելացում	120,000	-	(120,000)	-	-	-
Հատկացում պահուստային կապիտալին	-	10,000	(10,000)	-	-	-
Հայտարարված շահաբաժիններ (Ծանոթ. 24)	-	-	(696,000)	(696,000)	-	(696,000)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015թ.</b>	<b>150,000</b>	<b>35,000</b>	<b>440,629</b>	<b>625,629</b>	<b>28,012</b>	<b>653,641</b>

  
 Գլխավոր տնօրեն  
**Արամ Ագաոյան**

  
 Գլխավոր հաշվապահ  
**Արթուր Թորոսյան**



30 հունիսի 2016 թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**

Հազար դրամ

	2015թ.	2014թ. (վերաներկայացված)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Մուտքեր ծառայությունների մատուցումից	2,091,526	2,443,638
Զուտ մուտքեր վճարահաշվարկային գործունեությունից	707,204	489,147
Այ մուտքեր	18,418	15,746
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(976,694)	(1,194,958)
Վճարումներ աշխատակիցներին, կառավարման մարմիններին և նրանց անունից	(403,760)	(233,372)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(13,266)	(94,348)
Այլ ելքեր	(112,968)	(196,301)
Վճարված շահութահարկ	(244,571)	(205,545)
<b>Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր</b>	<b>1,065,889</b>	<b>1,024,007</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(179,738)	(158,239)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	59,302	-
Տրամադրված փոխառություններից ելքեր	(1,300,000)	(6,500)
Տրամադրված փոխառությունների մարումից մուտքեր	140,768	51,780
Ստացված տոկոսներ	2,274	-
<b>Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր</b>	<b>(1,277,394)</b>	<b>(112,959)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերի և փոխառությունների ներգրավում	1,789,791	4,354,808
Վարկերի և փոխառությունների մարում	(1,135,721)	(4,283,666)
Սեփական բաժնետոմսերի հետգնման դիմաց տրված կանխավճարի հետ վերադարձ	644,112	-
Վճարված տոկոսներ	(145,775)	(89,659)
Վճարված շահաբաժիններ	(539,400)	(874,300)
<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր</b>	<b>613,007</b>	<b>(892,817)</b>
<b>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>401,502</b>	<b>18,231</b>
Փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(12,839)	41,520
<b>Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի</b>	<b>1,042,428</b>	<b>982,677</b>
<b>Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի</b>	<b>1,431,091</b>	<b>1,042,428</b>



*[Signature]*  
Գլխավոր տնօրեն  
Արամ Ազատյան

*[Signature]*  
Գլխավոր հաշվապահ  
Արթուր Թորոսյան

30 հունիսի 2016 թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 9-ից 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**2015թ. ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ**

«Թել-Սել» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից և ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 2007թ. մայիսի 29-ին: Ընկերությունը գործում է ՀՀ տարածքում ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից: ՀՀ ԿԲ կողմից տրված լիցենզիաների հիման վրա Ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ տեսակներով.

- Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգ,
- Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ,
- Դրամական փոխանցումների իրականացում:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 հասցեում տեղակայված գլխամասային գրասենյակում: Ընկերությունը 31.12.2015թ. դրությամբ ունի 27 մասնաճյուղ (31.12.2014թ.՝ 13 մասնաճյուղ):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված վերստուգողի կողմից:

Խմբի աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 158 (31.12.2014թ.՝ 125) հոգի:

Ընկերությունը մայր կազմակերպություն չունի, բոլոր բաժնետերերը ֆիզիկական անձինք են.

<b>Բաժնետերեր</b>	<b>Բաժնետոմսերի քանակ</b>	<b>Բաժնեչափ, %</b>
Սարգսյան Արամ	63,750	42.50
Տրեյստեր Եվգենի	52,500	35.00
Ավետիսյան Տաթևիկ	33,750	22.50
<b>Ընդամենը</b>	<b>150,000</b>	<b>100.00</b>

Ընկերության տնօրենների խորհրդի անդամներն են.

- Արտաշես Ավետիսյան – Խորհրդի նախագահ
- Տրեյստեր Եվգենի (բաժնետեր) – Խորհրդի անդամ
- Ազատյան Արամ (գլխավոր տնօրեն) – Խորհրդի անդամ



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ Խումբը բաղկացած է մայր ընկերությունից և 2 դուստր ընկերություններից (այսուհետ՝ Խումբ), որոնց վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Դուստր ընկերության անվանումը	Գտնվելու վայրը	Գործունեության բնույթը	Վերահսկվող բաժնեմասը, %	
			2015թ.	2014թ.
«Թեյ-Սեյ Սերվիս» ՍՊԸ	ՀՀ	Տերմինալների տրամադրում վարձակալությամբ, գովազդային ծառայություններ	100%	100%
«Մեգա Պանտերա» ՍՊԸ	ՀՀ	Ակտիվ գործունեություն չի ծավալում	50%	50%

**2. Պատրաստման հիմունքները**

*2.1. Հայտարարություն համապատասխանության մասին*

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան:

*2.2. Չափման հիմունքները*

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման հետևյալ հիմունքների օգտագործմամբ՝

- ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումը՝ իրական արժեքի հիմունքով՝ հաշվի առնելով գործարքի հետ կապված ծախսումները, իսկ հետագա չափումը՝ ամորտիզացված արժեքի հիմունքով,
- ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ սկզբնական արժեքի սկզբունքով:

Իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

ՖՀՄՍ 13-ը սահմանում է իրական արժեքների որոշման հիերարխիա, որն արտացոլում է իրական արժեքը ստանալու տարբեր եղանակների հարաբերական արժանահավատությունը:

*(ա) Ակտիվ շուկա. գնանշվող գին (1-ին մակարդակ)*

Դիտարկել ակտիվ շուկաներում նույն ֆինանսական գործիքների համար գնանշվող գները:

*(բ) Գնահատման մեթոդիկա դիտարկելի ելակետային տվյալների օգտագործմամբ (2-րդ մակարդակ)*

Դիտարկել ակտիվ շուկաներում նույն ֆինանսական գործիքների համար գնանշվող գները կամ ոչ ակտիվ շուկաներում նույն կամ նմանատիպ գործիքների համար գնանշվող գները, կամ օգտագործել գնահատման մեթոդիկաներ, որտեղ բոլոր էական ելակետային տվյալները դիտարկելի են:

*(գ) Գնահատման մեթոդիկա էական ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործմամբ (3-րդ մակարդակ)*

Օգտագործել գնահատման մեթոդիկաներ, որտեղ մեկ կամ ավելի էական ելակետային տվյալները դիտարկելի չեն:

*2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը*

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Խմբի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:



2.4. Գնահատումների և դադողությունների օգտագործումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

2.5. Ստորագրումը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016 թվականի հունիսի 30-ին Ընկերության գլխավոր տնօրեն Արամ Ազատյանի և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Թորոսյանի կողմից:

2.6. Հաշվետվությունների համախմբման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաղկացած են Ընկերության և իր դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններից:

Դուստր են համարվում այն կազմակերպությունները, որոնց նկատմամբ Ընկերությունն ունի վերահսկողություն: Ընկերությունը վերահսկողություն ունի ներդրման օբյեկտի նկատմամբ միայն այն դեպքում, եթե ներդրողն ունի ստորև նշվածներից բոլորը՝

- ա) իշխանություն ներդրման օբյեկտի նկատմամբ,
- բ) ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և
- գ) ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ ներդրողի հատույցների գումարն իր ազդեցությանը ենթարկելու նպատակով:

Դուստր ընկերություններն ամբողջովին համախմբվել են Ընկերության կողմից վերահսկողություն ձեռք բերելու պահից սկսած և կշարունակվեն համախմբվել մինչև այդ վերահսկողության կորուստը: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ընկերության հետ միևնույն ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով հետևողական հաշվապահական հաշվառման քաղաքականություններ: Ներխմբային բոլոր մնացորդները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժիններն ամբողջությամբ բացառվել են:

Դուստր ընկերության ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքը վերագրվում է վերահսկվող բաժնեմասին, նույնիսկ եթե դա հանգեցնում է չվերահսկվող բաժնեմասի բացասական մնացորդի:

2.7. Նախորդ ժամանակաշրջանների վերադասակարգումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը հայտնաբերել է նախորդ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններում հետևյալ վերադասակարգման սխալները.

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

- Ընկերությունը գործակալների տերմինալներում դրամական միջոցները (որոնք պայմանագրով ի պահ են հանձնված գործակալներին) նախկինում ճանաչել է որպես դեբիտորական պարտք: Հաշվետու տարում այդ գումարները ներառվել են դրամական միջոցների կազմում:
- Ընկերությունը նախորդ տարի շահութահարկի գծով պարտավորությունը՝ 73,400 հազար դրամի չափով, ներառել է հարկային պարտավորությունների կազմում: Հաշվետու տարում շահութահարկի գծով պարտավորությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվել է առանձին տողով:

Նշված վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել ամենավաղ համադրելի ժամանակահատվածի՝ 01.01.2014թ. կուտակված շահույթի վրա, ուստի այդ ամսաթվի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը չի վերաներկայացվել:

**3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն**

Ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

**3.1. Հասույթ**

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում խմբի սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր ամսվա կտրվածքով գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
- բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.
- գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.
- դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

Ընկերությունն իր հասույթը հիմնականում ստացել է հետևյալ աղբյուրներից.

- Միջնորդավճարներ (կոմիսիոն եկամուտներ) ստացված գործընկերոջից/օպերատորից՝ վերջինիս օգտին հավաքագրած և փոխանցած գումարների դիմաց, որոնք առաջանում են հաճախորդների վճարումներից:
- Միջնորդավճարներ (կոմիսիոն եկամուտներ) գանձված անմիջապես հաճախորդից՝ վճարում ընդունելու ծառայության մատուցման դիմաց:
- Միջնորդավճարներ (կոմիսիոն եկամուտներ) գանձված անմիջապես հաճախորդից՝ միջազգային դրամական փոխանցումների դիմաց:



Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի արժեքը նվազեցվել է արժեզրկումից կորստի արդյունքում, դրանից հետո տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել է՝ արժեզրկման կորուստը չափելու նպատակով ապագա դրամական միջոցների հոսքերը գեղջելու համար:

**3.2. Շահութահարկ**

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գույվիլի սկզբնական ճանաչումից,

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղջվում:



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

**3.3. Ֆինանսական գործիքներ**

**Ճանաչում և չափում**

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական ճանաչման պահին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով, իսկ մնացած բոլոր

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները՝ իրական արժեքով՝ գումարած տվյալ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այլ Ընկերությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Խմբին այդ Ընկերությունների նկատմամբ չեն տալիս նշանակալի ազդեցություն, վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն, ներառյալ՝ այդպիսի գործիքների հետ կապված ածանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված ածանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները որպես վերադասակարգման ճշգրտում հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի (վարկառուի) նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով, փոխառուի կողմից փոխառուին գիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.

դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում.

ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը, կամ

զ) դիտարկելի տվյալներ՝ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝

զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ

զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելիացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիփոթեկային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

Խմբի պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ՝ չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումը իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անոհսկ տոկոսադրույքի աճի արդյունք է):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

Եթե փոխառության, վարկի, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են փոխառուի կամ թողարկողի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույք: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն զեղչվում, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Փոփոխական տոկոսադրույքով փոխառության, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման արժեզրկումից կորստի չափման նպատակով որպես գեղջման դրույք օգտագործվում է պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով առկա է դիտարկելի շուկայական գին, ապա այդ ակտիվի արժեզրկումից կորուստը կարող է չափվել այդ դիտարկելի շուկայական գնով որոշված իրական արժեքի հիման վրա:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը չափելու նպատակով հաշվի են առնվում այն դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ գրավի առարկայի իրացումից՝ հանած գրավը ստանալու և վաճառելու ծախսումները՝ անկախ այն բանից, թե արդյոք հավանական է գրավի առարկայի բռնագանձումը:

Արժեզրկման հավաքական գնահատման նպատակով՝ ֆինանսական ակտիվները խմբավորվում են պարտքային ռիսկի համանման բնութագրերի հիման վրա, որոնք ցույց են տալիս փոխառուների կարողությունը վճարելու բոլոր վճարվելիք գումարները ըստ պայմանագրային պայմանների (օրինակ՝ պարտքային ռիսկի գնահատման կամ դասակարգման գործընթացի հիման վրա, որը հաշվի է առնում ակտիվի տեսակը, արդյունաբերության ճյուղը, աշխարհագրական տեղամասը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ առնչվող գործոններ): Ընտրված բնութագրերը պետք է տեղին լինեն այդպիսի ակտիվների խմբերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար այն առումով, որ ցուցանշեն փոխառուների կարողությունը՝ վճարելու բոլոր վճարվելիք գումարները՝ ըստ պայմանագրային պայմանների: Այնուամենայնիվ, կորստի հավանականությունները և կորստին առնչվող այլ վիճակագրական ցուցանիշները խմբի մակարդակով տարբերվում են ստորև նշվածների միջև. (ա) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին գնահատվել է, և պարզվել է, որ արժեզրկված չեն և (բ) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին չի գնահատվել: Նման տարբերության արդյունքում կարող է պահանջվել արժեզրկման մեկ այլ գումար: Եթե Ընկերությունը չունի համանման ռիսկային բնութագրերով ակտիվների խումբ, ապա այն լրացուցիչ գնահատում չի իրականացնում:

Անցյալ կորուստների վերաբերյալ սեփական փորձի բացակայության կամ անբավարարության դեպքում, օգտագործում են համանման Ընկերությունների ֆինանսական ակտիվների համադրելի խմբերի գծով փորձը: Կորուստների անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա՝ արտացոլելու համար ընթացիկ այն պայմանների ազդեցությունը, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածի վրա, որի վրա հիմնված է կորուստների անցյալ փորձը, և բացառելու համար անցյալ ժամանակահատվածի այն պայմանները, որոնք ներկայումս գոյություն չունեն: Ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների գնահատականները արտացոլում են և ուղղվածությամբ հետևողական են առնչվող դիտարկելի տվյալների փոփոխություններին՝ ժամանակահատվածից ժամանակահատված (ինչպիսիք են գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, ապրանքների գների, վճարումների կարգավիճակի կամ այլ գործոնների փոփոխությունը, որոնք ցույց են տալիս խմբի կրած կորուստները և դրանց չափը): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են՝ կորստի գնահատականների և կորստի փաստացի փորձի միջև որևէ տարբերությունները նվազեցնելու համար:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Խումբը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ այն՝

ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ

բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

բ1) Խումբը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Խմբի կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը.

բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ Խմբին արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում.

բ3) Խումբը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Խումբն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որը ընկնում է հավաքման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Խումբն ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ

բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Խումբը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականությունը ճանաչվում է առանձին որպես ակտիվ կամ պարտավորություն:

Եթե Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:



Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը հաշվի է առնվում որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության (ակտիվի) կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության (ակտիվի) մարում և նոր ֆինանսական պարտավորության (ակտիվի) ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության կամ ակտիվի (կամ ֆինանսական պարտավորության կամ ակտիվի մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված կամ ստացված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### 3.4. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալության ներքո պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Խմբի ակտիվներ՝ վարձակալության սկզբի դրությամբ դրանց իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձատուի նկատմամբ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալական վճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության չմարված մնացորդի նկատմամբ ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք: Ֆինանսական ծախսերն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դրանք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվներին, որի դեպքում դրանք կապիտալացվում են՝ փոխառության ծախսումների գծով Խմբի ընդհանուր քաղաքականությանը համապատասխան: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջաններում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքում, երբ Խրախուսող պայմաններ են ստացվում գործառնական վարձակալության պայմանագիր կնքելու համար, այդ Խրախուսող վճարները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսող պայմաններից ամբողջ օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը:



*3.5. Արտարժույթով գործարքներ և արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոդեցումը*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

*3.6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

*3.7. Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվե-



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ**

կշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Սարքավորումներ	1-5 տարի
Գույք և գրասենյակային սարքավորումներ	1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-10 տարի

**3.8. Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	1-10 տարի
Լիցենզիաներ և արտոնագրեր	1-10 տարի

**3.9. Աշխատակիցների հատուցումներ**

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- ա) աշխատավարձը,
- բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
- գ) պարգևավճարները

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս,



բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Խումբն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որն Խումբն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Խումբը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝

ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և

բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

### 3.10. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

### 3.11. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե գոյություն ունի ճանաչված գումարիների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

### 3.12. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում



Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է ակտիվի կամ դրամաստեղծ միավորի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից և օգտագործման արժեքից առավելագույնը: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Չվերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

#### **4. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ**

##### *4.1. Ուժի մեջ չմտնող նոր ՖՀՄՍ-ներ, որոնք դեռ չեն որդեգրվել*

Հրապարակված, բայց մինչև խմբի կողմից ֆինանսական հաշվետվությունների հրապարակումն ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք խմբի կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Խումբը պատրաստվում է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- «*Ֆինանսական գործիքներ*» ՖՀՄՍ 9-ը (հրապարակվել է 2014թ. հուլիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց, սակայն Ընկերությունը կարող է որոշել չվերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը նախորդ ժամանակաշրջանների համար: Ստանդարտը ներմուծում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջներ, որոնք փոխարինում են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում ներառված պահանջներին: Ընկերությունը դեռ չի որոշել, թե երբվանից է ստանդարտը կիրառելու:
- «*Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ*» ՖՀՄՍ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.
  - «*Կառուցման պայմանագրեր*» ՀՀՄՍ 11,
  - «*Հասույթ*» ՀՀՄՍ 18,
  - «*Հաճախորդի հավաքարձության ծրագրեր*» ՖՀՄՄՄԿ 13,
  - «*Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր*» ՖՀՄՄՄԿ 15,
  - «*Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից*» ՖՀՄՄՄԿ 18,
  - «*Հասույթ. բարդերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ*» ՄՄԿ 31:



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

- «Վարձակալություն» ՖՀՄՄ 16-ը գործում է 2019թ. հունվարի 1-ից սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը, եթե «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՄ 15-ը նույնպես կիրառվում է: Ստանդարտը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները: Բոլոր վարձակալությունների արդյունքում վարձակալը ձեռք է բերում ակտիվի օգտագործման իրավունք հենց վարձակալության սկզբից, և եթե վարձակալության վճարները կատարվում են ժամանակի ընթացքում, նաև ձեռք է բերում ֆինանսավորում: Հետևաբար, ՖՀՄՄ 16-ը վերացնում է վարձակալության դասակարգումը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն, ինչպես պահանջվում է ՀՀՄՄ 17-ով և ներկայացնում է վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման մոդել: Վարձակալը պետք է ճանաչի. ա) ակտիվներ և պարտավորություններ բոլոր այն վարձակալությունների համար, որոնց ժամկետը 12 ամսից ավելի է, բացառությամբ եթե հիմքում ընկած ակտիվն ունի փոքր արժեք, և բ) համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսային ծախսը պետք է ներկայացվի վարձակալած ակտիվի (օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվի) գծով հաշվարկվող մաշվածությունից առանձին: ՖՀՄՄ 16-ը հիմնականում պահպանում է վարձատրի հաշվապահական հաշվառման ՀՀՄՄ 17-ի պահանջները: Հետևաբար, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն և հաշվառել այս երկու տեսակի վարձակալությունները տարբեր ձևով:
- «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՄ 1-ում փոփոխությունները պարունակում են որոշակի ուղեցույց էականության որոշման հետ կապված: Նշված փոփոխություններն ուժի մեջ են մտնում 01 հունվարի 2016թ.:
- Փոփոխություններ ՀՀՄՄ 16-ում և ՀՀՄՄ 38-ում կապված մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների հետ: ՀՀՄՄ 16-ին վերաբերող փոփոխությունները արգելում են կազմակերպություններին կիրառել հասույթի վրա հիմնված մաշվածություն: ՀՀՄՄ 38-ին վերաբերող փոփոխությունները ներառում են հերքելի ենթադրություն, որ հասույթը պատշաճ հիմունք չի հանդիսանում ամորտիզացիայի հաշվարկի համար: Նշված ենթադրությունը կարող է հերքվել միայն հետևյալ երկու հանգամանքներից մեկով.
  - ա) երբ ոչ նյութական ակտիվը հանդիսանում է հասույթի չափման միավոր, կամ
  - բ) երբ հասույթի և ոչ նյութական ակտիվից բխող տնտեսական օգուտների սպառման միջև առկա է բարձր կոռելյացիա:

Նշված փոփոխություններն ուժի մեջ են մտնում 01 հունվարի 2016թ. և կիրառվում են առաջընթաց:

Խմբի նախնական գնահատականներով նոր ստանդարտների կիրառումն էական ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա առաջին անգամ կիրառման ժամանակաշրջանում:

**4.2. Ուժի մեջ մտնող նոր ՖՀՄՄ-ներ, որոնք կիրառվել են առաջին անգամ**

Որոշ նոր ստանդարտներ կամ ստանդարտների փոփոխություններ ուժի մեջ են մտել՝ սկսած 01 հունվարի 2015թ., որոնք ազդեցություն չեն ունեցել Խմբի վրա, ուստի և չեն կիրառվել վերջինիս կողմից 01.01.2015թ. կամ այդ ամսաթվից հետո:

**5. Հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

ՖՀՄՄ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և



դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

#### 5.1. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Խումբն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Խումբը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Խումբը պարբերաբար հետևում է բաժնետերերի վերահսկողությանն ու նշանակալի մասնակցությանն այլ ընկերությունների կապիտալներում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուր գործընկերոջ հետ գործարքի ծավալները:

#### 5.2. Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Խումբը գնահատում է, թե արդյոք առկա են ակտիվների հնարավոր արժեզրկվածության (այսինքն՝ փոխհատուցվող գումարը հաշվեկշռային արժեքից պակաս լինելու) հայտանիշներ: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը: Նման հայտանիշների առկայության դեպքում իրականացվում է փաստացի արժեզրկումից կորստի հաշվարկ: Արժեզրկված ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որում նվազումը տեղի է ունեցել: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, նախկինում ճանաչված արժեզրկումն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Գուդվիլի և անորոշ օգտակար ծառայությամբ այլ ոչ նյութական ակտիվների արժեզրկվածությունը ստուգվում է յուրաքանչյուր տարեվերջին՝ անկախ հնարավոր արժեզրկվածության հայտանիշների առկայությունից:

Դեբիտորական պարտքերի համար արժեզրկման պահուստը հիմնված է ղեկավարության՝ յուրաքանչյուր հաճախորդի պարտքի հավաքելիության գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ եթե փաստացի ժամկետանց գումարներն ավելի շատ են, քան կանխատեսումները, իրական դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

#### 5.3. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Խումբը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Սարքավորումներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Ընդամենը
<b>Արժեք</b>				
Մնացորդն առ 01.01.2014թ.	437,693	28,269	16,333	482,295
Ձեռքբերում	151,892	9,238	2,098	163,228
Օտարում	(78,616)	(2,374)	(4,921)	(85,911)
Մնացորդն առ 31.12.2014թ.	510,969	35,133	13,510	559,612
Մնացորդն առ 01.01.2015թ.	510,969	35,133	13,510	559,612
Ձեռքբերում	117,448	17,521	-	134,969
Օտարում	(25,820)	(2,175)	-	(27,995)
Մնացորդն առ 31.12.2015թ.	602,597	50,479	13,510	666,586
<b>Մաշվածություն</b>				
Մնացորդն առ 01.01.2014թ.	188,720	14,204	6,972	209,896
Տարվա մաշվածություն	73,411	5,298	2,073	80,782
Օտարում	(10,884)	(2,074)	(840)	(13,798)
Մնացորդն առ 31.12.2014թ.	251,247	17,428	8,205	276,880
Մնացորդն առ 01.01.2015թ.	251,247	17,428	8,205	276,880
Տարվա մաշվածություն	91,383	8,636	1,508	101,527
Օտարում	(10,142)	(1,837)	-	(11,979)
Մնացորդն առ 31.12.2015թ.	332,488	24,227	9,713	366,428
<b>Հաշվեկշռային արժեք</b>				
Առ 31.12.2014թ.	259,722	17,705	5,305	282,732
Առ 31.12.2015թ.	270,109	26,252	3,797	300,158

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրոյական հաշվեկշռային արժեքով 1,178 անուն հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 173,730 հազար դրամ (31.12.2014թ.՝ 936 անուն՝ 155,536 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խմբի կողմից ներգրավված վարկերի (տե՛ս Ծանոթ. 13) դիմաց որպես ապահովման միջոց գրավադրված սարքավորումների հաշվեկշռային արժեքը կազմել է 55,594 հազար դրամ (31.12.2014թ.՝ 80,385 հազար դրամ):

7. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
<b>Արժեք</b>			
Մնացորդն առ 01.01.2014թ.	41,384	2,105	43,489
Ձեռքբերում	17,040	500	17,540
Մնացորդն առ 31.12.2014թ.	58,424	2,605	61,029
Մնացորդն առ 01.01.2015թ.	58,424	2,605	61,029



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ձեռքբերում	35,906	500	36,406
Օտարում	(250)	(2,038)	(2,288)
Մնացորդն առ 31.12.2015թ.	94,080	1,067	95,147
<b>Ամորտիզացիա</b>			
Մնացորդն առ 01.01.2014թ.	12,877	1,401	14,278
Տարվա ամորտիզացիա	6,624	372	6,996
Մնացորդն առ 31.12.2014թ.	19,501	1,773	21,274
Մնացորդն առ 01.01.2015թ.	19,501	1,773	21,274
Տարվա ամորտիզացիա	12,340	706	13,046
Օտարում	(250)	(2,038)	(2,288)
Մնացորդն առ 31.12.2015թ.	31,591	441	32,032
<b>Հաշվեկշռային արժեք</b>			
<b>Առ 31.12.2014թ.</b>	<b>38,923</b>	<b>832</b>	<b>39,755</b>
<b>Առ 31.12.2015թ.</b>	<b>62,489</b>	<b>626</b>	<b>63,115</b>

31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ ոչ նյութական ակտիվների կազմում ներառված է 29,575 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով ծրագիր, որը ձեռք է բերվել Խմբի դուստր «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀ մշակույթի նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային տոմսարկղերի համատեղ նախագիծ իրականացնելու նպատակով:

**8. Գույվիլ**

**Հազար դրամ**

	31.12.2015թ.	31.12.2014թ.
«Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գույվիլ	1,077,950	1,077,950
«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գույվիլ	79,750	79,750
<b>Ընդամենը</b>	<b>1,157,700</b>	<b>1,157,700</b>

2015թ. Ընթացքում Խումբը գնահատել է գույվիլի փոխհատուցվող արժեքը և չի հայտնաբերել գույվիլի արժեզրկում (2014թ.՝ արժեզրկում ևս չի հայտնաբերվել):

**9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ**

Հազար դրամ	31.12.2015թ.	31.12.2014թ. (վերաներկայացված)
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	241,815	206,641
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	4,176	1,634
Դեբիտորական պարտքեր առհաշիվ անձանց գծով	331	-
Տրված կանխավճարներ	396,767	102,466
Այլ դեբիտորական պարտքեր	12,111	-
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	(27,629)	-
<b>Ընդամենը</b>	<b>627,571</b>	<b>310,741</b>

31.12.2015թ. դրությամբ տրված կանխավճարների մեջ ներառված է 365,420 հազար դրամ արժեքով կանխավճար, որը տրված է Ընկերության բաժնետեր Տաթևիկ Ավետիսյանին՝ իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման համար: Բաժնետոմսերի հետգնման գինը սկզբնապես կազմել է 1,210,000 հազար դրամ (բաժնետոմսերի 22.5%), որի դիմաց հաշվանցվել է նախկինում բաժնետիրոջը տրված փոխառությունը՝ 1,166,132 հազար դրամ գումարով: Կանխավճարի տրման պահից, սակայն Ընկերությունը վերաբանակցել է բաժնետոմսերի վաճառքի պայմանները, որի արդյունքում միայն 7.5% բաժնետոմսերն են նախատեսվում հետ գնել, և համապատասխանաբար, Ընկերությանը հետ է վերադարձվել 644,112 հազար դրամը, իսկ 156,600 հազար դրամը հաշվանցվել է հայտարարված շահաբաժինների դիմաց:

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժույթային ռիսկերին համբի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 23-ում:

**10. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ**

*10.1. Դրամական միջոցներ*

<b>Հազար դրամ</b>	<b>31.12.2015թ.</b>	<b>31.12.2014թ. (վերաներկայացված)</b>
Դրամարկղ՝ ՀՀ դրամով և արտարժույթով	23,527	10,929
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	403,619	355,568
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	25,014	14,968
Դրամական միջոցներ սեփական տերմինալներում	288,120	245,094
Դրամական միջոցներ գործակալների տերմինալներում	143,573	80,314
Դրամական միջոցներ ճանապարհին	547,238	335,555
<b>Ընդամենը դրամական միջոցներ</b>	<b>1,431,091</b>	<b>1,042,428</b>

Դրամական միջոցները ճանապարհին իրենից ներակայացնում է Ընկերության աշխատակից ինկասսատորների, այլ ինկասսացիոն կազմակերպությունների և գործակալների կողմից տերմինալներից ինկասսացված և բանկային հաշիվներին մուտքագրած, սակայն բանկերի կողմից դեռևս չհաշվառված գումարները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համբի կողմից ներգրավված վարկերի (տե՛ս Ծանոթ. 13) դիմաց որպես ապահովման միջոց գրավադրվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում Ընկերության հաշվարկային հաշիվներում շրջանառվող դրամական միջոցները:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժույթային ռիսկերին համբի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 23-ում:

*10.2. Ոչ դրամային գործարքներ*

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
<b>Ոչ դրամային գործարքներ՝ կապված ներդրումային և ֆինանսավորման գործունեության հետ</b>		-
Տրամադրված փոխառության հաշվանցում բաժնետոմսերի հետգնման դիմաց ստացման ենթակա գումարի հետ	1,166,132	
Բաժնետիրոջից հետ վերադարձման ենթակա կանխավճարի հաշվանցում հայտարարված շահաբաժինների գծով պարտավորությունների դիմաց (Ծանոթ. 9)	156,600	-

**11. Կանոնադրական կապիտալ**

Ընկերությունը հաշվետու տարում ավելացրել է կանոնադրական կապիտալը կուտակված շահույթի հաշվին 120,000 հազար դրամի չափով, ինչի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 150,000 հազար դրամ, որը բաժանված է 1,000 դրամ անվանական արժեքով 150,000 հատ հասարակ (անվանական) բաժնետոմսերի: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

2015 թվականի նոյեմբերի 17-ին Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել բաժնետերերից հետ գնել բաժնետոմսերի 56.28%-ը և այն վերավաճառել կիպրոսյան ընկերությանը: Սակայն, 2016 թվականի հունվարին բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է, որ Ընկերությունը չի իրականացնի բաժնետոմսերի ձեռքբերումը, այլ ուղղակիորեն բաժնետերերը իրենց բաժնետոմսերը կվաճառեն նշված ընկերությանը: Սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ գործարքը դեռ չի կատարվել:

**12. Պահուստային կապիտալ**

Ընկերությունը հաշվետու տարում ավելացրել է պահուստային կապիտալը 10,000 հազար դրամի չափով կուտակված շահույթի հաշվին: 31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ պահուստային կապիտալը կազմել է



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

35,000 հազար դրամ: Պահուստային կապիտալը նախատեսված է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները չբավարարեն:

**13. Վարկեր և փոխառություններ**

Հազար դրամ	Տարեկան տոկոսադրույք, %		Վարկային պարտավորության (փոխառության) մնացորդ առ 31 դեկտեմբերի	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
<b>Երկարաժամկետ բանկային վարկեր</b>				
«Արդշինբանկ» ՓԲԸ	11%	-	499,401	
«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ	11%	11%	44,441	71,114
<b>Կարճաժամկետ բանկային վարկեր</b>				
«Արդշինբանկ» ՓԲԸ	-	10.5%	-	178,114
<b>Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս</b>				
«Արդշինբանկ» ՓԲԸ	11%	10.5%	463,011	1,878
«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ	11%	11%	27,030	27,164
<b>Փոխառություններ</b>				
Բաժնետերերից ստացված կարճաժամկետ փոխառություններ	-	11%	-	135,965
Այլ երկարաժամկետ փոխառություններ	10%	-	46,754	-
<b>Ընդամենը</b>			<b>1,080,637</b>	<b>414,235</b>

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքած պայմանագիրը նախատեսում է, որ ներգրավված վարկային միջոցները պետք է ուղղվեն բացառապես հիմնական միջոցների ձեռքբերմանը, և այս պահանջի չկատարումը հանգեցնում է վարկի անհապաղ վերադարձման:

31.12.2015թ. դրությամբ վարկերի և փոխառությունների մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ			
Մինչև 30 օր	30-180 օր	180-365օր	1 տարուց ավել
43,028	203,188	243,826	590,595

Բանկային վարկերի հետ կապված արժույթային ռիսկին համրի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 23-ում:

**Վարկերի ապահովությունը**

31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ համրի ներգրավված վարկերի դիմաց հսումբը գրավադրել է իր որոշակի ակտիվներ, որոնց հաշվեկշռային արժեքները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	31.12.2015թ.	31.12.2014թ.
Տերմինալներ (Ծանոթ. 6)	55,594	80,385

31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ համրի կողմից ներգրավված վարկերի դիմաց գրավադրված են նաև համրի հաշվարկային հաշիվներում շրջանառվող դրամական միջոցները, ինչպես նաև Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետերերի 100% մասնակցության իրավունքը (բաժնետոմսերը):

Նշված վարկերն ապահովված են նաև համրի կողմից ստացված հետևյալ երաշխավորություններով.

- «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ից ստացված վարկն ապահովված է Ընկերության բաժնետեր Տաթևիկ Ավետիսյանի երաշխավորությամբ,

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

- «Արդշինբանկ» ՓԲԸ-ից ստացված վարկն ապահովված է Ընկերության բոլոր բաժնետերերի երաշխավորությամբ:

2015թ. ընթացքում 146,582 հազար դրամ (2014թ.՝ 84,801 հազար դրամ) ֆինանսական ծախսերն իրենցից ներկայացնում են վարկերի, օվերդրաֆտի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսային ծախսերը:

**14. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր**

<b>Հազար դրամ</b>	<b>31.12.2015թ.</b>	<b>31.12.2014թ. (Վերաներկայացված)</b>
Գնումների գծով	61,852	5,716
Վճարահաշվարկային գործառնությունների գծով	1,726,763	1,392,735
Ստացված կանխավճարներ	130,609	100,780
Հարկերի և պարտադիր վճարների գծով հարկային պարտավորություններ	16,933	3,402
Այլ կրեդիտորական պարտքեր	515	904
<b>Ընդամենը</b>	<b>1,936,672</b>	<b>1,503,537</b>

Խմբի առևտրական և այլ կրեդիտորական պարտքերից 1,788,615 հազար դրամը (31.12.2014թ.՝ 1,398,451 հազար դրամ) ենթակա է մարման 30 օրվա ընթացքում:

**15. Հասույթ**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Վճարահաշվարկային ծառայությունների մատուցումից	2,114,262	1,889,624
Այլ	146,018	136,314
<b>Ընդամենը</b>	<b>2,260,280</b>	<b>2,025,938</b>

**16. Մատուցված ծառայությունների ինքնարժեք**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Գործակալների միջնորդավճար	497,067	305,236
Ինկասացիոն ծախսեր	78,167	74,601
Տերմինալների տեղակայման վարձավճարներ	251,892	122,967
Հիմնական միջոցների մաշվածություն	75,470	62,405
Աշխատավարձ	236,769	183,574
Նյութական ծախսեր	41,775	34,496
Այլ	41,633	67,841
<b>Ընդամենը</b>	<b>1,222,773</b>	<b>851,120</b>

**17. Իրացման ծախսեր**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Աշխատավարձ	41,287	47,419
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	72,346	19,671
Տրանսպորտային ծախսեր	2,104	536
Այլ	3,058	1,475
<b>Ընդամենը</b>	<b>118,795</b>	<b>69,101</b>

**18. Վարչական ծախսեր**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Աշխատավարձ	106,223	73,363
Տնօրենների խորհրդի վարձատրություն	21,000	-
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	34,147	26,137
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,650	8,511
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	19,359	22,440



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Գրասենյակային և կոմունալ ծախսեր	72,574	55,042
Աուդիտ և խորհրդատվություն	12,581	2,200
Բանկային ծախսեր	16,639	7,886
Չփոխհատուցվող հարկեր	2,589	2,389
Այլ	9,657	12,885
<b>Ընդամենը</b>	<b>301,419</b>	<b>210,853</b>

**19. Այլ եկամուտներ**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Պաշարների վաճառքից եկամուտ	2,200	2,400
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	8,004	38,204
Արտարժույթի առուվաճառքից եկամուտ	203,450	143,823
Այլ եկամուտներ	24,788	3,022
<b>Ընդամենը</b>	<b>238,442</b>	<b>187,449</b>

**20. Այլ ծախսեր**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Դեբիտորական պարտքերի դուրսգրումից ծախսեր	27,629	-
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	11,746	13,688
Հաճախորդների բողոքների բավարարման ծախսեր	7,293	-
Դրամական միջոցների պակասորդ	7,303	4,375
Մաշվածություն և ամորտիզացիա	5,431	75
Տույժեր, տուգանքներ	1,888	-
Այլ	5,998	5,899
<b>Ընդամենը</b>	<b>67,288</b>	<b>24,037</b>

**21. Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Ընթացիկ հարկի գծով ծախս	139,756	213,555
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ	(10,414)	1,257
	<b>129,342</b>	<b>214,812</b>

Խմբի կիրառվող հարկի դրույքը 20% է (2014թ.՝ 20%):

**Շահութահարկի փաստացի (գործող) տոկոսադրույքի համապատասխանեցում.**

<b>Հազար դրամ</b>	<b>2015թ.</b>	<b>%</b>	<b>2014թ.</b>	<b>%</b>
Շահույթ նախքան հարկումը	608,994		992,734	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքով	121,799	20.00	198,547	20.00
Ձուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ հիմնականում արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	7,543	1.24	16,265	1.64
	<b>129,342</b>	<b>21.24</b>	<b>214,812</b>	<b>21.64</b>

**22. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Բոլոր բաժնետոմսերը պատկանում են թվով 3 ֆիզիկական անձանց (տե՛ս Ծանոթ. 1): Ընկերության բաժնետերերի հետ գործարքները և դրանց մնացորդները ներկայացված են ստորև (տե՛ս նաև Ծանոթ. 13):

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

	Գործարքի	Գործարքի	Չմարված	Չմարված
	գումար	գումար	մնացորդ	մնացորդ
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
<b>Հազար դրամ</b>				
<b>Ընկերության բաժնեպատկերների հետ՝</b>				
Փոխառության ստացում	-	-	-	135,965
Ստացված փոխառության մարում	(135,965)	-	-	-
Տրամադրված փոխառություն	1,300,000	-	-	-
Տրամադրված փոխառության հետ վերադարձ	(133,868)	-	-	-
Տրամադրված փոխառության հաշվանցում բաժնետոմսերի հետգնման դիմաց ստացման ենթակա գումարի հետ	1,166,132	-	365,420	-
Սեփական բաժնետոմսերի հետգնման դիմաց տրված կանխավճարի հետ վերադարձ	(644,112)	-	-	-
Հետ վերադարձման ենթակա կանխավճարի հաշվանցում հայտարարված շահաբաժինների գծով պարտավորությունների դիմաց	(156,600)	-	-	-
<b>Ընկերության գլխավոր տնօրենի հետ՝</b>				
Փոխառության տրամադրում	-	-	-	6,900
Տրամադրված փոխառության մարում	(6,900)	-	-	-
Ստացված վարձակալություն	600	568	91	45

**Ղեկավար անձնակազմի գծով հապուցումները ներկայացված են ստորև.**

Հազար դրամ	2015թ.	2014թ.
<b>Գլխավոր տնօրենին՝</b>		
Աշխատավարձ	16,846	17,644
Պարգևատրում	2,000	1,605
<b>Տնօրենների խորհրդի անդամներին՝</b>		
Վարձատրություն	21,000	-

**23. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում**

*23.1. Ընդհանուր ակնարկ*

Խմբի գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անխուսափելի հետևանքն է: Այդուհանդերձ, Խմբի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Խմբի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունը: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Խումբը:

*23.2. Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր*

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակը և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող տոկոսադրույքների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Խմբում ռիսկերի կառավարումն իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Խմբի գործառնական միավորների հետ՝ դրանց մեղմացմանն ուղղված գործառույթներն իրականացնելու նպատակով:

*23.3. Պարտքային ռիսկ*



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ Խմբի համար կառաջացնի ֆինանսական կորուստ և հիմնականում առաջանում է Խմբի գործընկերներից (գործակալներ, օպերատորներ և այլն) ստացվելիք դեբիտորական պարտքերից և դրամական միջոցներից:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>31.12.2015թ.</b>	<b>31.12.2014թ. (Վերաներկայացված)</b>
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթ. 9)	223,631	206,641
Տրամադրված փոխառություններ	6,800	15,350
Դրամական միջոցներ (Ծանոթ. 10)	1,407,564	1,031,499
	<b>1,637,995</b>	<b>1,253,490</b>

Խմբի ղեկավարությունը համարում է, որ Խումբը չունի պարտքային ռիսկի նշանակալի կենտրոնացում: Խմբի ղեկավարությունը սահմանափակում է իր ենթարկվածությունը պարտքային ռիսկին՝ իր գործընկերների վարկունակության և վճարունակության նախնական վերլուծության և պարտքի սահմանաչափերի կիրառման շնորհիվ:

**23.4. Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Խմբի մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Խումբը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

Խմբի ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետները՝ համաձայն գործող պայմանագրերի, 31.12.2015թ. և 31.12.2014թ. դրությամբ, ներկայացված են Ծանոթ. 13-ում և Ծանոթ. 14-ում:

**23.5. Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Խմբի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

**ա) Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Խումբը ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական, և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման

**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Խմբի համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

Խմբի կողմից 31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ ներգրավված վարկերը և փոխառությունները ֆիքսված տոկոսադրույքով են, ուստի ղեկավարությունը դրամական արտահոսքերի տոկոսադրույքային ռիսկը համարում է ոչ էական (տե՛ս Ծանոթ. 13):

*բ) Արժույթային ռիսկ*

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

Դրամով	Միջին տարեկան փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2015թ.	2014թ.	31.12.2015թ.	31.12.2014թ.
1 ԵՎՐՈ	530.82	552.16	528.69	577.47
1 ԱՄՆ դոլար	477.86	415.77	483.75	474.97
1 Ռուսական ռուբլի	7.89	10.99	6.62	8.15

Խմբի զուտ ենթարկվածությունն արտարժույթային ռիսկին հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար դրամ	31.12.2015թ.			31.12.2014թ.		
	RUR	EUR	USD	RUR	EUR	USD
<b>Ֆինանսական ակտիվ (պարտավորություն)</b>						
Դրամական միջոցներ	16,725	3,542	7,111	12,240	2,069	2,754
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	7,016	-	387	960	-	-
Վարկեր	-	-	(1,009,166)	-	-	(180,625)
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(5,442)	(967)	(5,582)	(3,790)	(86)	-
<b>Արտարժույթային զուտ ենթարկվածություն</b>	<b>18,299</b>	<b>2,575</b>	<b>(1,007,250)</b>	<b>9,410</b>	<b>1,983</b>	<b>(177,871)</b>

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժույթային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	31.12.2015թ.		31.12.2014թ.	
	Շահույթի վրա ազդեցություն	Սեփական կապիտալի վրա ազդեցություն	Շահույթի վրա ազդեցություն	Սեփական կապիտալի վրա ազդեցություն
USD ուժեղացում 10%-ով	(100,725)	(100,725)	(17,787)	(17,787)
EUR ուժեղացում 10%-ով	258	258	198	198
RUR ուժեղացում 10%-ով	1,830	1,830	941	941

**23.6. Ֆինանսական գործիքների իրական արժեք**

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական



**2015թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

պարտավորությունների իրական արժեքները որոշվում են՝ դրանցից առաջացող բոլոր դրամական ներհոսքերն ու արտահոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքներով զեղչելու միջոցով:

Ղեկավարության կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

**24. Շահաբաժինների հատկացում**

2015 թվականի մայիսի 12-ին Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը հայտարարել է 650,000 հազար դրամ տարեկան և 46,000 հազար դրամ միջանկյալ շահաբաժիններ:

**25. Կապիտալի կառավարում**

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Ընկերությունը համապատասխանի հաստատված արտաքին պահանջներին, և որ Ընկերությունը պահպանի բարձր վարկարժեք և կապիտալի բարձր նորմատիվներ՝ իր գործունեությունն ամրապնդելու և բաժնետերերի շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով:

Ընկերության կապիտալի մեծության նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից: Համաձայն ՀՀ ԿԲ կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերի պահանջների՝ Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափն առ 2015թ. դեկտեմբերի 31-ը պետք է կազմի 100,000 հազար դրամ: Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը՝ այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը, որից կատարվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանված համապատասխան նվազեցումները: Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում պահպանել է ՀՀ ԿԲ կողմից սահմանված կապիտալին վերաբերող բոլոր պահանջները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի չափը՝ հաշվարկված համաձայն ՀՀ ԿԲ պահանջների, ներկայացված է ստորև.

<b>Հազար դրամ</b>	<b>31.12.2015թ.</b>
Հիմնական կապիտալ	410,000
Լրացուցիչ կապիտալ	-
<b>Ընդամենը ընդհանուր կապիտալ</b>	<b>410,000</b>

**26. Պայմանական դեպքեր**

*26.1. Ապահովագրություն*

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Խուճաբն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Խուճաբը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ԽճԲի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26.2. Դարական գործեր

2015թ. ընթացքում հսումբը ժամանակ առ ժամանակ մասնակցել է և շարունակում է մասնակցել դատական վեճերին՝ որպես հայցվոր: Խմբի ղեկավարության ենթադրությամբ ներկայումս առկա դատական գործերը չեն կարող էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության կամ ֆինանսական վիճակի վրա:

26.3. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում դեռևս աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու: Որևէ ժամանակաշրջանի համար ոչ ճիշտ հարկային հաշվետվություն ներկայացնելու տարվան հաջորդող երեք տարին լրանալուց հետո այլևս նոր հարկային պարտավորություններ՝ ներառյալ տույժեր և տուգանքներ, չեն կարող առաջանալ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Խմբի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

26.4. Երաշխավորություններ և երաշխիքներ


31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ հսումբը չունի տրամադրած երաշխավորություններ:


Իր գործառնական գործունեության ընթացքում հսումբը պարբերաբար բանկային երաշխիքի ստացման պայմանագրեր է կնքում բանկերի հետ: Այդ պայմանագրերի համաձայն՝ բանկերը երաշխիք են տրամադրում հոգուտ օպերատորների՝ վճարումների ընդունման ծառայությունների մատուցման դիմաց: 31 դեկտեմբերի 2015թ. դրությամբ Ընկերությունն ունի 180,000 հազար դրամ արժեքով բանկային երաշխիքի գործող պայմանագիր:

26.5. Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

հսումբը որպես վարձակալ

Գործառնական վարձակալությունները վերաբերում են Խմբի գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի և ավտոմեքենաների վարձակալությանը: Տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված նվազագույն վարձավճարների մեծությունը կազմել է 77,742 հազար դրամ (2014թ.՝ 57,221 հազար դրամ): Պայմանական վարձավճարներ չկան:

  
Գլխավոր տնօրեն  
Արամ Աղաոսյան

  
Գլխավոր հաշվապահ  
Արթուր Թորոսյան



30 հունիսի 2016 թ.